

16 տարին չլրացած քաղաքացիների անձնագրավորումը

16 տարին չլրացած քաղաքացու անձնագիր ստանալու համար ԼՂՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների բաժին է ներկայանում քաղաքացու ծնողներից մեկը կամ օրինական ներկայացուցիչը և ներկայացնում.

- դիմում՝ ԼՂՀ ոստիկանության պետի տեղակալի անունով,

- ծննդյան վկայական, կամ մինչև 16 տարին լրանալը ստացած անձնագիր,

- 35x45 մմ չափսի գունավոր երկու լուսանկար,

- ծնողների ամուսնության վկայականը կամ ամուսնալուծված լինելու դեպքում՝ ամուսնալուծության վկայականը, կամ ամուսնության մեջ չգտնվելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, հայրության ճանաչման դեպքում՝ հայրության ճանաչման վկայականը,

- օրինական ներկայացուցիչ հանդիսանալու դեպքում՝ օրինական ներկայացուցիչ հանդիսանալու փաստը հաստատող փաստաթուղթ,

- ծնողների անձնագրերի 2-5-րդ էջերի պատճենները,

- ծնողներից մեկի օտարերկրյա քաղաքացի լինելու դեպքում՝ ծնողների համաձայնությունը, որը նրանց կողմից ստորագրվում է այն հանձնելիս: Եթե ծնողն անձամբ չի կարող ներկայացնել համաձայնությունը, ապա ներկայացվող համաձայնության վրա նրա ստորագրության իսկությունը պետք է վավերացված լինի նոտարական կարգով:

- 16 տարին չլրացած քաղաքացու ծնողը կամ օրինական ներկայացուցիչը անձնագրային ծառայություն է ներկայացնում անչափահասի անունով վճարված 4000 դրամի չափով պետական տուրքի անդորրագիր (1000 դրամը՝ անձնագիր ստանալու համար, 3000 դրամը՝ օտարերկրյա պետություններում վավերականության մասին նշում կատարելու համար):

16 տարին չլրացած քաղաքացու հաշվառումը կատարվում է ծնողներից որևէ մեկի կամ օրինական ներկայացուցչի հաշվառման վայրում:

Անձնագիրը տրամադրվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Անձնագրային ծառայությունը պարտավոր է դիմումատուին իրազեկել, որ առանց երկու ծնողների համաձայնության երեխայի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունքը կարող է սահմանափակվել սահմանային մարմնի կողմից:

Անձնագրային ծառայություններին արգելվում է՝

- մինչև 16 տարեկան քաղաքացիների անձնագիր տալ առանց օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետի մասին նշում կատարելու,

- մինչև 16 տարեկան քաղաքացիների անձնագրում օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետի մասին նշում կատարելու համար պահանջել դիմող ծնողի կամ մյուս ծնողի համաձայնությունը,

- մերժել մինչև 16 տարեկան քաղաքացիների համար անձնագրային գործողության կատարումը, եթե նրա ծնողը գտնվում է հետախուզման մեջ:

16 տարին չլրացած քաղաքացիների անձնագրերը ստանում են նրանց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները:

Երեխայի ներկայությունը պարտադիր է: